

ԻՐԱՄՈՒՆԷՔ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԵՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱՅԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշտպանի համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Արտատպանի համար (Երկու քիչը մեկ ծախսով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆՔԻՆԻ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռայլն դրկել հետեւեալ հասցեով

ԽՐԱՍԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՄՈՒՆԷՔ» ԼՐԱԳՐՈՅ. — Վ.Ա.Ռ.Ն.Ա. (Պաշտպան)

Редация на ВѢСТНИКЪ

Rédaction du journal

“И р а в у н к ъ”

„I r a v o u n k“

ВАРНА (България)

V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն ըրկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին աւ-
տոյնովին կամ մասամբ:
Իրանուցեալ տողը 20 ստանիսով երե-
թեւ տեղի անգամներու համար 20 0/0
գնդը կը շինի:

ԲԱՅ ՆԱՄՍԱԿ

Խոսքերի նորոգութիւն թաղակա-
նոցիս

Պարոններ,

Կը շնորհաւորենք ձեր ինքնըն-
տիր թաղականութիւնը:

Վառնա, Ֆիլիպպէ, Սիլիստրէ,
Բուրգաս ևն. ևն. տեղերու հայրը-
նակցութիւն կայ 1-2 ամսէ ի վեր
Օրմանեան փաշային՝ չը Պատրի-
արքն, եկեղեցիներու մէջ յիշատա-
կիլէ դադարած են. և դուք միայն
ներած էք Ձեր բացառիկ լուսա-
միտ քաղաքագիտութեամբն ո՞ր
տեղոյ տէրտէրներն յիշատակեն
զայն: Թէ ինչո՞ւ. — Անշուշտ Ձեր
զորաւոր և խելացի պատճառաբա-
նութիւններն ունիք. ուստի հրա-
պարակաւ Ձեզ կոչ կընենք որ
բարեհաճիք հրապարակել զանոնք
Ձեր հաւանած թերթերուն միոյն
միջոցաւ, որպէսզի բովանդակ գաղ-
թականութիւնը վերսկսի յիշիլ
յիշիլ չը պատրիարքն, տալով
ձեզ իր հիացման քուէն:

Այսօր տէրտէր կոծիկեանը պա-
պանձեցաւ ժողովուրդին արդար
«չը յիշուի» պահանջին հանդէպ,
դուք ալ ձեր կարգին յայտարարե-
ցիք «գալ շուրթ յիշել պիտի
տանք»: Ուստի հրապարակաւ կը
շնորհաւորենք Ձեր յետադիմական
կուռ միտքն, և արգահատելով ձեզ
կը յիշեցնենք թէ, չը պիտի յա-
ջողիք ալ ալ աւելի վարկարեկ
պիտի լինիք յաչս ժողովրդեան:
ցտեսութիւն:

Կարգադիր Մանուկաւ

1/13 Օգոստոս, 99
Թուշուք

ՍՈՒԼԹԱՆԻՆ

ԳԱՐՏՆԻ ԴԻԻԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Ողբիւ տը Բառի հրատա-
րակից իր յունիս 15ի թուովը
Պ. Բիէն Գիյեառի մէկ յօդուածը
«Սուլթանին գաղտնի դիւանագի-
տութիւնը» տիտղոսով: Այդ յօդ-
ուածով Պ. Գիյեառ կը պատմէ
բանակցութիւնները որոնք տեղի
ունեցած են, Սուլթանի նախա-
ձեռնութեամբը, Սուլթանին և

հայ յեղափոխական մարմնոյ մը
միջեւ որ ինքզինքը կը կոչէ «Հայ յե-
ղափոխական կիզը. մասնախումբ»:
Այդ մասնախումբին Բարիզի ներ-
կայացուցիչները ընդունած են
1897ի աշնան Սուլթանին կողմէ
եկած առաջարկը բանակցութեան
մտնելու, բայց մերժելով կէս պաշ-
տօնական պատուիրակներու հետ
գործ ունենալ, պահանջած են
պաշտօնական անձնաւորութիւն մը
միջնորդ ունենալ, և Բարիզի օս-
մանեան դեսպան Միւնիւր-Պէյ միջ-
նորդ կարգուած է: Մասնախում-
բը, թուրք կառավարութեան և
հայ ժողովրդին միջեւ համաձայ-
նութեան հաստատման իբր միակ
պայման բարենորոգմանց ամբող-
ջական գործադրումը պահանջելով
հանդերձ, առաջարկած է որ գտնէ
Սուլթանը, իր բարի-կամեցողու-
թիւնը ապացուցանելու համար,
նախապատրաստական մէկ քանի
տնօրինութիւններ ընէ իսկոյն,
այսինքն, Ա. Ընդհանուր ներում,
Բ. Զարդերէն յետոյ երկրէն հե-
ռացած գաղթականներուն ազատ
վերադարձ, Գ. Հայոց դէմ ճնշու-
ղական ու արգելիչ տնօրինու-
թեանց բարձում, Դ. Նիւթական
նպատակ ալն գաղթականներուն ու-
րոնք դրամ չունենալուն պատճա-
ռով անկարող են իրենց տեղը
դառնալ: Վեց ամիս բանակցու-
թենէ յետոյ, Սուլթանը իրատէ
մը կը զրկէ մասնախումբին որով կը
խոստանայ ընդհանուր ներում յե-
ղափոխական շարժումներու պատ-
ճառով բանտարկուած բոլոր Հա-
յերուն, ու Եւրոպա գտնուող յե-
ղափոխական մասնախումբին հրա-
ւեր կը կարգայ թուրքիա դառ-
նալ, խոստանալով անոնց ավին
տեսակ շնորհներ:

Այս քաղցրալիզու իրատէին պա-
րունակած խոստումներէն ոչ մէկը
կ'իրականանայ. հազիւ քանի մը
տառնեակ բանտարկեալներ կ'ար-
ձակուին: Իրատէն իրեն լոկ նը-
պատակ ունեցած է հայ յեղափո-
խականները Պոլիս քաշել: Ասոնք
Սուլթանին սպասած ոչ միամտու-
թիւնը կ'ունենան ոչ ալ վատու-
թիւնը, և մէկ քանի անգամ ուժ-
գին և կտրուկ լեզուով մը յիշեց-
նելէ յետոյ հանդիսաւորապէս տը-

րուած խոստումները, մասնախում-
բը վեց պետութեանց արտաքին
գործոց նախարարներուն կ'ուղղէ
յիշատակագիր մը որով կը տեղե-
կացնէ Սուլթանին և մասնախում-
բին միջեւ տեղի ունեցած բա-
նակցութիւնները և անոնց մէջ
Հայ յեղափոխական Մասնա-
խումբին ցոյց տուած խոհականու-
թեան, ճկունութեան և ուղղամը-
տութեան փոխարէն՝ Սուլթանին
անպատկառ խաբեքայութիւնը,
և ապագային պատահելիքներու
համար Սուլթանը միայն պատաս-
խանատու կը բռնէ: Այդ միջոցին
ոչ միայն իրատէին խոստումները
չեն գործադրուիլ, այլ հարստա-
հարութիւնները, բանտարկութիւն-
ները, սպանութիւնները կը շարունակ-
ուին Պոլիս ու գաւառները (Պ.
Գիյեառ որոշ թուականներով ու
տեղերով բազմաթիւ իրողութիւն-
ներ կը յիշէ): Մասնախումբը ի-
րատէին անգործադրութեան մա-
սին կ'ծու բողոքագիր մը կը զրկէ
Սուլթանին. յարաբերութիւնները
խզուելու կը մօտենան, երբ Միւ-
նիւր պէյ Պոլիս կը կանչուի, Սուլ-
թանին հետ մասնաւոր տեսակցու-
թիւններ կ'ունենայ, և կը դառ-
նայ նորանոր խոստումներով, ու-
րոնք չեն իրագործուիր: Մասնա-
խումբը, զգուած, ծանուցագիր
մը կը զրկէ որով կը սպառնայ բա-
նակցութիւնները վերջնապէս դադ-
րեցնել ի՞նչ տասը օրէն իրատէ-
ին խոստումները չկատարուին:
Խոստումները չեն կատարուիր, և
յարաբերութիւնները կը խզուին:
Բայց վիշկով կայսեր ուղեւորու-
թեան ատեն, թուրք կառավա-
րութիւնը խոհակութիւն կը հա-
մարի բանակցութիւնները վեր-
սկսիլ, և այս անգամ Բերայի
կառավարիչ Էնվէր-Պէյ միջնորդի
դեր կը կատարէ: Մասնախումբը
իր անգործուելի պայմանները կը
կրկնէ, զգուշանքն ու արհամար-
հանքը յայտնելով անոնց որ կը
կարծեն խաբեքայութիւններով կը-
րակը մարիլ ու խնդիրը խնդրել:
Սուլթանը ուրիշ բան չի գտնե-
րսելու բայց եթէ հրաւիրել Մաս-
նախումբին զխաւոր ներկայացու-
ցիլը որպէս զի Պոլիս երթայ բա-

նակցութիւնները անձամբ կատա-
րելու համար: Մասնախումբը կը
պատասխանէ պարզ հեռագրով մը
որով կը յայտարարէ թէ «այդ
լիբը կատակին» ու կամ կանուխ
պիտի պատասխանէ գործողու-
թիւնը:»

Պ. Գիյեառ, պարզելով Հայաս-
տանի արդի կացութիւնը և հայ
ցեղը ջնջելու համար Սուլթանին
հրամանով ի գործ դրուած ամեն
տեսակ հրէշային միջոցները, կեզ-
րակացնէ. «Անխուսափելի կերպով,
այն կորովի ու խոհական մարդիկը
որ այդ ցեղը կը ներկայացնեն
Եւրոպայի մէջ, և զոր շատ ատե-
նէ ի վեր ամենքը կը խաբեն,
յուսահատական վրիժառութեանց
պիտի մղուին: Այլ հոգեւորին պի-
տի չընեն թէ կը վտանգեն կամ
ոչ, խաղաղութիւնն ու ապահովու-
թիւնը եւրոպական ազգերուն, ու-
րոնք անզգայ հանդիսատես եղան
1894-96ի զարհուրելի ջարդերուն
ու ներկայ թշուառութեան Տարբեր
բան՝ ի՞նչ պատահմամբ ուշիմ
նախարար մը ընդհուպ միջամտէ
մեծ պետութեանց մէկուն անու-
նովը և լուծէ Հայաստանի խնդի-
րը՝ ինչպէս կրէտէինը, խնայելով
երբ դեռ ուշ չէ՝ հազարաւոր
մարդկային կեանքեր:» Պ. Գիյ-
եառ հրատարակած է այս բանակ-
ցութեանց ամբողջ թղթակցու-
թիւնը, որ մեծապէս պատուաբեր
է հայ Մասնախումբին, ինչպէս
Մէքքիառ տը Ֆրանս ամսաթեր-
թին յուլիսի թուոյն մէջ Պ. Գ.
Հ. Հիրշ ալ դիտել կուտայ: Յայտ-
նի է որ ոչ մէկ վայրկեան Մաս-
նախումբը ու է հաւատք չէ ու-
նեցած Սուլթանին կարծեցեալ
բարի կամեցողութեանը վրայ,
բայց ընդունած է Սուլթանին ա-
ռաջարկը, անոր ամբողջ նենգա-
մըտութեան, վատութեան ու սը-
տուկեան վրայ հիմնուած քաղա-
քականութիւնը անգամ մը եւս
հանդիսաւորապէս երեւան հանե-
լու համար յաչս Եւրոպայի, մա-
նաւանդ որ կը թուի թէ քուլի-
սին մէջ բանակցութեանց հանդի-
սատես ու թերեւս խորհրդական
գտնուած են հայասէր Եւրոպա-
ցիներ որոնցմէ մին, Գիյեառ,

այս դէպքին պատմաբանը կը դառնայ, Մասնախումբին բանաժողովին լրջութիւնը, ազնուութիւնն ու քաջութիւնը համակրանքը շահեցաւ ոչ միայն Պ. Լա. վիսին, որ յանձն առաւ Ռըվիշ տը Բառիի պէս ծանրակշիռ թերթի մը էջերը բանալ հայ յիշատակականներու անվերապահ կերպով նպաստաւոր յօդուածի մը, այլ ամբողջ Ֆրանքո-Հայկական ընկերութեան, որ Լա Հէի Դիսպոնսորհորդին ուղղած իր բողոքագիրը գլխաւորապէս հիմնեց այս բանակցութեանց պատմութեանը վրայ և կերպով մը առաջուց արգարացուց ամեն ինչ որ հայ յուսահատութիւնը կրնայ գործել և ունէ դէպքի պատասխանատու Սուլթանը հաշակեց:

Դիտելու կէտ մը այս թղթակցութեան մէջ տեսութեան ու ըզգացման լայնութիւնն է որով մասնախումբը, ունէ կուսակցական մոլեռանդութենէ զերծ, ի նկատի ունեցած է ընդհանուր ազգին շահերը, և՛ զօրօրինակ՝ բանտարկեալներու արձակում պահանջած ատեն, շեշտած է հաւասարապէս Դրօշակեան ինչպէս Հնչակեան բանտարկեալ գործիչներու անունները:

Մեր յեղափոխականներու գործունէութեանը մէջ, ուր ամէն բան միշտ առաջուց փողով ու թմբուկով ծանուցուած է, առաջին անգամ ըլլալով կը տեսնուի մարմին մը որ կազմակերպուած է ստուերի մէջ, կը գործէ առանց աղմուկի, առանց լրացրական պօռնախօսութիւններու, և տորիի մը չափ ատեն գործունէութիւն մը կուենայ, ամենալարժ պայպիմաններու մէջ, առանց որ ունէ մէկը զայն իմանայ, և զայն կը հրապարակէ միմիայն այն վայրկեանին ուր հարկաւոր էր հրապարակել և այնպիսի պայմաններով որոնք օգտակարագոյններն էին, Ոչ մէկ որոշ ծանօթութիւն ունինք այս գործիչ մարմնին վերայ, բայց գոհունակութեամբ մատնանիշ կընենք այս մէկ քանի

«յատկութիւնները», որոնք հազուագիւտ են եղած մեր մինչեւ հիմակուան գործունէութեանը մէջ. ճշմարիտ «գաղտնի ընկերութիւն» մըն է որ ունինք գիտացնիս, ինչպէս կը բաղձայինք որ ըլլային հայ յեղափոխական գործիչ մարմինները:

«ԱՆԱՀԻՏ»

ԱԶԴ

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ա. ՏԱՐԻ

Կազմեց Յ. Կ. Պօնտագեան

Այս պատկերազարդ քերական — Ընթերցարանը որ մինչեւ օգոստոս 20 լոյս պիտի տեսնէ, կը յանձնարարուի մասնաւորապէս Պատ. ուսուցիչներու ուշադրութեան: Պատրաստուած է շատ գիւրգիւտից մէթոտով և կը պարունակէ բարոյական խրատներ, իրագիտական և առողջապահական ծանօթութիւններ, կարճ և սիրուն պատմութիւններու և առանձիններու ձեւին տակ, որոնք գրուած են մանուկներու հասկանալի լեզուով: Ազգային-պատմական ամենէն նշանաւոր մէկ քանի դէմքերու և դէպքերու վրայ կարճ տեղեկութիւններ, քերականական քանի մը գիտելիք, մանկական երգեր և հանելուկներ, ամենքն ալ խնամքով ընտրուած, պզտիկ տղոց համար շատ հետաքրքրական և հրահանգիչ կը դարձնեն զրբոյկին ընթերցումը:

Գին, 60 սանթիմ հատը: Դրացրոցներու և գոնէ 20 օրինակ զընդներու համար 15 0/0 զեղջ. Դիմել սա հասցեով՝ J. G. Bondjoukian Varna

ՎԱՌՆԱՅԻ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ

Պուկարիոյ էն հայաշատ քաղաքը վառնան, Հայկական ընթերցարանի մը կարօտը կը քաշէ ու կը քաշէ դեռ. և ո՞վ գիտէ

մինչեւ երբ:

Միթէ կը պակսի՞ գիտակից երիտասարդութիւն մը, վառնայի մէջ, որ շնայ հանրութեան այս կարեւոր պէտքին գոհացում տալ: Չեմ կարծեր. այդ պիտի ըլլար ամօթ երիտասարդութեան և ա. նարգանք վառնայի ամբողջ հայութեան:

Պուկարիոյ գրեթէ բոլոր հայաբնակ քաղաքներու մէջ թէեւ վաղուց հաստատուած են ընթերցարաններ, սակայն վառնան ուր հայկական մամուլն ալ իր քանի մը ներկայացուցիչները ունի, դեռ «զուրկ է անկէ»:

Թէեւ տարի մըն է որ գոյութիւն ունի հոս Ընթերցարանից Ընկե. թութիւն մը, սակայն չենք գիտեր ի՞նչ կընէ: Կիրի նման վայրկեան կան բոլորքումէ մը յետոյ շատ շուտ մարիով՝ վեց ամիսներէ ա. լելի է որ կազմաւորուած վիճակի մը մէջ կը գտնուի:

Ամիս ու կէս առաջ այս սիւնակներուն մէջ Ընթերցարանի ազնիւ ու բանիմաց անդամներուն հրաւեր մը ուղղուեցաւ որ ամեն բանէ վեր հանրային շահը նկատի առնելով՝ ջանան ժամ առաջ ընկերութիւնը իր կոչման արժանի շաւղի մէջ դնել. սակայն դժբաղդաբար այդ հրաւեր արձագանք չը գտնելով՝ այսօր ընկերութիւնը կը գտնուի այն վիճակին մէջ, ուր կը գտնուէր ասկէ ամիս ու կէս առաջ:

Մեր երիտասարդներ ի՞նչ արգելքներ կը տեսնեն արդեօք որ սկսուած գործ մը այսքան շուտ երեսի վրայ կը թողուն:

Ի՞նչ է ուրեմն այս վիճակին պատճառը — ոչինչ. . . միմիայն յարատեւութեան ոգւոյ պոկոտութիւնը և քչիկ մ'ալ — թող ներուի մեզ ըսել — ոմանց հոսսի. թութիւնն ու անհնաւոր հաշիւները:

Այս վիճակը զարմանելու համար մեծամեծ զոհողութիւններու հարկ չկայ, մի քիչ հասկացողութիւն ու սկսուած գործ մը յարատեւելու կամը ու ջանք բաւ են: Այս-

քանն ալ կը պակսի՞ մեր երիտասարդներու մօտ. այդ չեմ գիտեր. միայն սա գիտեմ որ հիմա մեր Ընթերցարանը ընթերցարանէ ա. լելի ուրիշ խնդրով մը՝ խմբագիր ըլլալու տենդէն բռնուած՝ թերթ մը հրատարակելու հարցով զբաղած են: Թիւրիմացութիւն կամ կատակ չկարծուի այս, իրողութիւն է:

Չէ՞ Պարոններ, չէ. այդչափ բարձրերը մի թուիք. եթէ նպատակիդ հանրութեան օգտակար ըլլալ է, ձեր «յօթին ու կարողութեան համապատասխանող գործերու ձեռնարկեցէք ու յարատեւեցէք զայն, ցարդ վառնայի մէջ հայկական ընթերցարանի մը չգոյութիւնը պարզապէս անպատուութիւն է տեղական երիտասարդութեան համար. ժամ առաջ այդ արտապէտք է մաքրել հասկցա՞ք:

Կ. Շարահիւսանց

29 յուլիս 99

Վառնա

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

«Օ՝Օ»

Ձեր ազգօգուտ լրագրոյ յուլիս 21 թուականի թերթին մէջ Արա Արշամ ստորագրութեամբ յօդուածի հեղինակին թէեւ քաղաքի պանդխտութիւնը պէտք եղած արհամարանքն մատուցած է, բայց ի վերաշինուելուն գայթակղեալ մտաց հրապարակաւ եւս արժան է որ հերքէ «Խրատուք» ընթերցողաց առջեւ ի վեր հանելով անոր անիրաւութիւնն որ կուսակցականութեամբ միշտ վնասակար եղած է տեղւոյս հայ գաղթականութեան անգամներին:

Բաց ի Պ. Արա Արշամէ տեղւոյս հայ գաղթականութիւնը կատարեալ հաւատք և հաւատարմութիւն ունի Պ. Պիպեռեանի և իւր չորս ծանօթ Պարոններու վերայ թէ նախկին և թէ վերջին հանգանակութեան հաշիւներու

(*) Գոհութեամբ կ'իմանանք թէ Ընկերութիւնը այս օրեր ընթերցարանի յատուկ չէնք մը վարձելու վրայ է:

Ի. Խ.

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (31)

ՃԱՄԱՆԱԿԱԿԵ ՏԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԸ

—Օ՝Օ—

ՄԱՍՆ Բ.

—Ըսել է դուք տեղեկութիւն ունէիք Միհրապաղայի լարած դաւի մասին եւ քանի որ տեղեկութիւն ունէիք չը կրցա՞ք ամեն միջոցի դիմել զինքը ընտանիքներ թշուառացնելու անգղամ գիտաւորութեանէն ետ կեցնելու համար. —Ճիշդ է որ ես եւ մայրս տեղեկութիւն ունէինք. ես արդէն համարձակութիւն չունէի անոր այդ մասին բան մը իսկ խօսելու. իսկ մայրս բաւ մը աւելի խօսելու տեղ չունեցաւ. Միհրապաղայի խնդրեցի էր աղտոտ կիւղի մը տպաւորութեան տակ, այն է օր մը չէ օր մը Յովհաննէս աղայի ոսկիներուն եւ աղջկան տիրանալու լիբը կիրքը:

մօրս միջոցաւ Հրանտիցը ուղեց կնութեան, բայց որովհետեւ ինքը այդ ընտանիքին մէջ ազնիւ համբաւ չունի, ինչպէս դիւրին է մակաբերել, մերժուեցաւ. ասոր վրայ քայմաքամին հետը համաձայնելով իբր քաղաքական յանդուր բանտարկել ստացաւ. որոշած էր երկրորդ օրը վաճարմն ալ ձերբակալել տալ երբ ես գաղտնի նամակով մը թելադրեցի անոր որ հետնալ Ակնէն: Շուշան տաք տաք արտասուք թափել սկսաւ:

Ակնքան ասոր վրայ զփուարութիւն չկրեց Շուշանի սիրտը կարգաւոր. սակայն շատ եղակաւ երեւոյթ մը դաւաճապիական նախաձիգ զգացումը կրցաւ զսպել երբ նկատեց որ անոր սիրտը ճշմարտապէս արժանաւոր երիտասարդի մը համար կը փափախէր:

«Ո՛ր է արդեօք հիմա վաճարմն, համարձակեցաւ. հարցնել Շուշան իր հօրեղբոր որդւոյն այս վերջինին աչ-

քերուն ներշնչող վստահութիւնը տեսնելով:

—Ձեմ գիտեր Շուշան, բայց օր մը չէ օր մը, եթէ կապի, իր լուրը յոյս ունիմ որ կառնենք:

Եւ այն ատեն անտարակոյս ես ալ պիտի իմանամ անորու ըլլալը. խոստացիր որ պիտի հաղորդես Ակնքան, իսկ գալով ինձի ըրած առաջարկիդ, հաւատացիր որ քու քարոզած սկզբունքներդ իմ ալ սկզբունքներս են. այս բոլորէն իսկ իմ գործունէութիւնս սկսած համարէ. աշխարհի մէջ մօտս Ակնի մէջ ինձի չափ եւ պուշէք չ'մըն ալ աւելի զօրացող աղջիկ մը կայ, Հրանտիցը անոր պիտի մօտենամ, թերեւս անիկայ. եթէ գիտնայ որ իր հայրը եղբորս զոհն է, զիս պիտի առէ եւ մերժէ. սակայն ես պիտի յամտնուիմ եւ փորձով ցոյց պիտի տամ թէ ես իրեն համար ամեն ատեն անձնուէր եմ եւ իրեն հաւասար եղբայրս դատապարտող:

անիկայ անհրաժեշտ պէտք է մեր բնեւոր ձեռնարկին յաջողութեանը համար. այն եւ Ակնի հայ աղջիկներն ալ զարթեցնել. համոզուած եմ որ առ այդ վաճարմնի ձեռքին տակ պէտք եղածին չափ պատրաստուած կըլլայ:

—Գոհ եմ քեզմէ Շուշան, պատասխանեց Ակնքան, վաճարմնի մասին եթէ ուր ըլլալը իմանամ պէտք եղածը պիտի իմացնեմ քեզ. շատ լաւ գիտեմ ըրեր Հրանտիցին հետ ձեռք ձեռքի տալ խորհելով. զօրացողութիւններէն կը ծնին ամենէն մեծ բարիքներ. եւ ես ալ այն կտրածիքն եմ որ րազդէն անխնայ չ'երպով ձաղ ուսած Հրանտիցը մեր առաջադրած նպատակին հասնելու էր կարելու. ազգակը պիտի ըլլայ, Ակնից վերջը ամեն շարժում ձեռք ազատական հայ թերթի մը պիտի առնէ գոր հետգհետէ ձեր ունեւորելիք բնկերութեան կարգաւոր պիտի բացառէք:

Այդ օրէն ետքը կարծեմ Շուշանի

ճշգրտութեան մասին, կը ցուցնէր ըսել որ Պ. Արայ Արշամը նման կոկողովի ղեկավարութեան տակ իր անհատականութիւնը արտայայտելու և պաշտպանելու կը փորձուի, սակայն լաւ կընէ Պ. Արայ Արշամ եթէ տակէ վերջը գաղթականութեան թիւն և անոր պատիւը եղող անձանց պատուին հետ չը խաղայ, իր արդի կողմնակցութեամբ զիրքն լուր և հետաքրքրուի կը պահանջէր և ոչ թէ առանց ներքինն ու արտաքին գիտնալու հրապարակ ցատկել:

Չայս ի գիտութիւն և ի խըրատ յիշեալ պարունին, հրատարակելիք խնդրելով, մնամք անձնուէր անգամը:

Հայ գաղթականութեան Պարբերիչ

(*) (Երեսունը ստորագրու. քիւն)

ՊԱՏԱՍԻԱՆ ԱՌԱՄ

Սոփիա, 28 յուլիս 99
Իրաւունքի 55 թուոյն մէջ մեր գործի հանդէսին մասին գրածը կարդացնիք, անոր գլխաւոր կէտերուն կու գտնուի մատուցելու պատասխաններ:

1) Կիրակի օր քննութիւն կատարելն ոչ օրէնքի եւ ոչ սովորութեան հակառակ է, այլ բազմաթիւ ունեւորներու անհաշիւ համար է. քննուող աղայաց քաղաքի երկար ժամանակ յատկացնելն ալ անպատշաճ բան մը չէ:

2) Դպրոցական հանդէսը թատերաբեմի մը վրայ կատարուած ըլլալուն կը զարմանաք: Մի՞ գարմանաք Պարոն, քիչ մը անկեղծ եղէք եւ յիշեցէ՛ք թէ մեր վարժարանի սրահը միայն աշակերտաց կը բաւէր ու հանդիսականաց անբաւական էր. ոնցեւ ատարուան փոքր մի՞ մոռնաք: Իսկ իր բեկեղեցին մեզ ցոյց կուտաք, դա ալ իր անպատեհութիւնը ունէր, քանի որ աշակերտք եւ աշակերտութեան դաշնակի եւ ջութակի առաջնորդութեամբ պարեր:

(*) Ուրախութեամբ ստացանք սոյն նամակը եւ ամենայն հաճութեամբ կը հրատարակենք, որով Պ. Արայ Արշամի հարցումին պատճառած չփոթութիւնը ըստ ամենայնի կը փարատի. ստորագրութեանց շատերը մեզ ծանօթ են, ուստի այլ եւս ամեն կասկածէ վեր է պարունակութեան ճշգրտութիւնը. Այս խմատով ուրիշ նամակներ ալ հասած են մեզ արդէն:

Դ. Խ.

եւ այլ եւ այլ խաղեր պիտի կատարէին հոն: Հանդէսին թատերաբեմին վրայ կատարուիլն եւ վարժուելին անկէ խօսիլն, բացի ձեզնէ բնաւ մէկի մը տնայատեն չպիտի երեւայ, որովհետեւ ներքին Պատրիարքներ, Տէմիրճիպաշեաններ, Նորատուրկեաններ, Եռսուֆեաններ եւ այլ բազմաթիւ թատերաբեմի վրայ խօսած են:

3) Պր. Ա. Ջեր գրածին հակառակ արտասանած ճառի մէջ յայտուելն եւ կնոյ մը անվայել բառեր բնաւ չը կային: Այդ ճառին պատճէնը անա ներքին կը զրկեմ իրաւունքի պատ. խըրատ գրութեան: (*)

4) Իմ Ռուսաճառը ճամբորդելու Չայս կի Աւագ շաբաթիւն էր. յորում եկեղեցին կը նորոգուէր եւ բակին մէջ բանող գործադրները հասակաւոր աղջկանց անվայել խօսքեր կուղղէին. ահա այդ անպատեհութեան եւ Չայսական սոսներու առթիւ քանի մը օր արձակուրդ որոշուեցաւ: Այդ միջոցին վարժուելին ազատ չէ՛ր իր ուզած տեղն երթալու:

5) Եթէ 15-20 օրի չափ ալ խանութպանութիւն ըրի, աշակերտներս առանց դատի չմնացին. հարցուցէք անոնց, պիտի իմանաք թէ՛ սերտողութեան, ձեռագործի, Պուլկարեանի, զբօսանքի եւ արձակուրդի յատկացեալ ժամերուն խանութ գացած եմ:

6) Պր. Ա. եթէ կը ծաղրես թէ կը աշխատիմ, որովհետեւ պէտք ունիմ. այո՛, գողութիւն, խարդախութիւն, չեմ գործեր, այլ պատուաւոր կերպով կաշխատիմ, որպէսզի շատկաւ օր մը մէկէ մը սանդիւմ մը ուղղու. խանութպանութիւն, վարժուելիութիւն, ճամբորդութիւն եւ ինչ որ իմ ընտանիքիս ու ամենայն նպատակաւոր է կընեմ համեստութեան շաւղէն առանց չեղեւիլու. եւ այս բոլորին համար ձեր հրամանին պէտք չունիմ:

7) Կնոյ մը վարժուելի ըլլալն արգելու օրէնք մը չիս կրնար գտնել. Պուլկարական օրէնքը պարտաւ ինչ հարկի յիշէ Պոլսը, ուր Տիկնայք Գայիանէ Մաղակեան, Չայսէլ Ծօնէիան, Ազա-

(*) Տիկնի վարժուելին մեզ զրկած պատճենին մէջ անվայել ոչ մի բառ չիւնք գտած: Եւ ցաւ յայտնած է թէ անգլէսն հոգաբարձութեան խաղաղութիւնը անհոգ գտնուած է վարժարանին հանդէպ, ինք անոնց օգնականի եւ առանց անտուր մնացած է, բոլոր դասերը, հսկողութիւնը եւ նոյն իսկ աւելածութիւնը միայն եւ միայն իր վրայ ծանրացած են, եւ այս ամենը 60 ֆրանքի փոխարէն: Վարժարանին մէջ դասախօսուած առարկաներն են, հայերէն, Պուլկարեանի, Գաղղիերէն, Աշխարհագրութիւն, Իրաւագիտութիւն, Առողջապահութիւն, Մարզականութիւն, Ազգ. Պատմութիւն, Թուրքա-նութիւն եւ Ասեղնադրութիւն: 25 աշակերտներ 3 կարգի բաժնուած:

Դ. Խ.

պի Սարաֆեան, Մաքրուէր վարժուելիներ եղած են եւ են. ու եթէ յատկաւ իր արհեստի վարժուելիներու ցանկ մը կրնամ ներկայացնել Պուլկարաց մէջ կը պակտին արդեօք, տիկնի Գարալէօֆ, նախարարի մը կինն, օրական հացի կարծաւ. Եւրոպայի մէջ ալ չը կան. բայց աչքերդ ու պիտի տեսնես անհամար:

Ռուսաճառն ու Պուլկարի կատալարութեան ինձ արուած վկայականները կը բաւեն ինձ համար. եւ արդէն աչք չունիմ Սօփիայի մէջ պաշտօնավարելու. հրաժարական հրապարակաւ առեւած եմ: Քահանայ իղիմաց ժողովրդեան հրապարակաւ ինձ չնորհակալութիւն յայտնած է: Ուստի ալ ասպարէզը քեզ կը թողուի, եւ խճի տուննայն հանգարտութեամբ երկուք ու կէս տարի հոս պաշտօնավարեցի, առ ի չգոյէ վարժարան մը ստեղծեցի ու այս գոհացուցիչ վիճակին բերի. իսկ դուք որ նախանձող մը եղաք, չանացէք որ ձեր գործերն ալ նախանձելի ըլլան: (*)

Տիկնի վ. Յ. ՌԻՆՃԵՍԵՆ

ԼՐԱՔԱՂ

Կ. Պուլսոյ Պատրիարքարանի Խառն Ժողովը Դատական և Կրօնական գործոց նախարարութեան մէկ պաշտօնագրէն տեղեկացու թէ Սոյսմանը արտօնած է որ Սոյս կաթողիկոսական ընտրութեան համար վաղուց ի վեր ինչ գործողութիւն որ կը կատարուէր՝ միւննոյնը կատարուի:

Ժողովը որոշեց գործը Պատրիարքին յանձնել, որպէսզի՝ նա խըրիմաց օրինակներուն համաձայն ընտրական գործողութեանց ձեւ նորոգի. Խաղաղեան Տ. Սահակ եպիսկոպոսին յանձնուի՝ օրինական շրջանակին մէջ հսկելու համար այս ընտրութեան վրայ:

— Ամին. Ալէալօճեան եպիսկոպոսի հիւանդութիւնը շատ ծանր վիճակի մէջ է. բժիշկները յայտարարել են թէ թիկեւ յուզում մը և խորկութիւն մը կրնան կաթուած առնել լիւրիւ. վաղեղի արիւնը զլուխը համակուած է. Այս

(*) Այս վիճարանութիւնը այլ եւս փակուած կը նկատուի:

Դ. Խ.

պատճառաւ տեսակցութիւնները բացարձակապէս արգիւտելի են:

Հայ-Հռովմէականաց նոր Պատրիարքին ընտրութեան առթիւ եւ կեղեցական հանգէսը անցեալ կիրակի օր կատարուեցաւ Ս. Յովհան Ոսկերեան եկեղեցւոյն մէջ, բայց հակառակ մեծագործ ծանուցումներու ժողովուրդը չէր հաճած նոյն իսկ այդ հաղուադէպ հանդէսին ներկայ գտնուելու. որովհետեւ ժողովրդեան ընտրելին ուրիշ անձնաւորութիւն մըն էր, իսկ Էմմանուէլեան եպիսկոպոսը եկեղեցականաց ու Պապին ընտրելին էր, ինչ որ այս վերջինները կրցին յաջողցնել հակառակ երեւելեաց ժողովին ու ժողովրդեան կամքին: Երեւելիներէն հանդէսին ներկայ ոչ ոք չէ գտնուած. նոր ընտրի Պատրիարքը այդ օրը երկու առթիւ տեսնաբանած է, առաջին անգամ իտալերէն, իսկ երկրորդին թրքերէն լեզուաւ. որով Էմմանուէլեան պատրիարք ցոյց կուտայ թէ ինք կատարեալ օտարամուլ մըն է:

— Թիֆլիսի Գօռու գումառին մէկ գիւղին հայ բնակիչները այս օրերս վրացաց հետ վեճի մէջ են եկեղեցւոյ մը մասին: Հայերը կառավարութեան արտօնութեամբ գիւղին Ս. Նշան եկեղեցին վերանորոգել կը սկսին, բայց վրացիք արգելք կը հանդիսանան առարկելով թէ այդ եկեղեցին իրենց կը պատկանի, Գննութեանց կը ձեռնարկուի, որ ցարդ վերջնական հանգամանք չէ ստացած. բայց և այնպէս եկեղեցւոյ պատերէն հայերէն տառեր քանդակուած խաչքարեր գտնուած են:

— Պուլկարէն ծանօթ խնդրոյ մասին երկար նամակ մը հասած է մեզ. նամակագիրը ուրիշ փաստերով միատեղ կը յայտարարէ թէ մի քանի ազգայիններ արտաքսել տալու համար կ'առաջարկութեան մատուցուած ամբաստանագրոյն տակ դրուած առաջին ստորագրութիւնը Գալուստ Ուճեանին է, որուն հետեւած են ուրիշ 11 միամիտներ:

սիրտը կրծող, մաշեցնող ուրիշ առանց մոռնելու չքացաւ եւ զժքաղդ հայուհին ապրելու տաք եռանդով ողբերկուած վերանորոգուեցաւ եւ կամ վերանորոգուելի կեղծեց:

Յովհաննէս աղան Աքեա փոխադրուելէն ետքը ինչ տանի մէջ վարժուեցաւ անոր դատութեան. զաւակին եւ կնոջը կարողութեան խոշոր տեղեկութեան աստիճանի մը հասած էր. բայց հայեցնող աղքատութիւն չըրաւ անոր վրայ. որովհետեւ ինչպէս ըսինք անիկոյ ներկայագրի տէր մարդ էր եւ գիտէր հանգամանքները ի նկատի ունենալ եւ պարագաներուն յարմարել. իր վախճանին կը սպասէր տեսակ մը լաւ ատենութեամբ որ կարգ մը դատաւարականներու այսօրէն վաղը ազատուելու տարօրինակ յոյսեր կը ներշնչէ. անոր անանկ կուգար որ իր բերդարգելութիւնը որոշուած պայմանաւորէն առաջ պիտի լը-

րանար բախտաւոր պատահականութեամբ մը եւ ազատ ոչ պիտի չնչէր. միայն թէ միւս կողմէն կը նախագգար սր այդ վայելելիք ազատութիւնը կատարեալ չպիտի ըլլար, որովհետեւ խոր վիշտ մը պիտի գար վերիվայր ընել իր զգացած ուրախութիւնը եւ երջանկութիւնը:

Անիկոյ չնայելով որ Ակնէն սրտակէզ նամակներ կընդունէր երեք ամիս չը պատասխանեց տեսակ մը անտարբերութեամբ որ իրեն ընտանիքին մասին ունեցած զօրաւոր սերին նուազելուն նշան չէր:

Իր տունը ծանր մտատանջութեան մէջ էին այդ մասին. երբ երեք ամիս ետքը տիկնի վերգինէ հետեւեալը ընդունեց Աքեայէն.

«Եւրօրս միջոցաւ հասցէիս զրկուած նամակները եւ ամական գումարները անկորուստ ստացած եմ. գոհ եմ որ գործերս կարգին են. նամակ չգրե-

լուս պատճառը ուրախութիւն տեղեկութիւն մը հաղորդելու վիճակին մէջ չգտնուելու է:»

Ձեզ արդէն ատենին երկտողով մը զժքաղութեան հարժառիթի մասին քանի սողով բացատրած եմ թէ այս պէտքը գրուելու թափողը Մինաս աղան եղած է. հիմա որ դատաւարութիւնն առատուկը հաղած եմ եւ վիճակս որոշ է, ստով հիմա միայն քեզի կ'իմացնեմ որ անիկոյ ինձմէ Հրանդը ուղեց խել, ամուսնանալ անոր հետ, եւ մերժեցի. մերժեցի նախ որ իրեն պէս վատ անձի մը հետ ամուսնանալու կապ հաստատել չէ՛մ ուզեր. երկրորդ որ իր այդ նպատակը յաջողցնելու համար քայքայեալ միջոցութեամբ զիս իր քաղաքական յանցաւոր ամբաստանած էր. ո՛վ գիտէ եթէ երբեք համակերպելու ամենապղծակ տկարութիւնը ունենայի ինչ իրաւոր պիտի խաղար այդ լիւրքը:

«Ուշ քիչ մը, ըստ երեւոյթի, բայց ըստ իս ճիշդ ատենին է որ կը գրեմ. ես համոզուած եմ որ անիկոյ իր ներպատակէն չպիտի ընկրկի եւ ամեն միջոց ի գործ պիտի դնէ զձեզ որսալով իր նպատակին հասնելու համար. եթէ ըլլայ որ տկարանաք — ինչ որ չեմ յուսար — ետքը քեզնէ մանաւանդ պահանջելիք հաշիւ ունիմ. ես չեմ ուզեր որ Հրանդը օձի մը զոհ երթայ: Դու գիտես ո՛րքան պատուախնդիր է Յովհաննէսը, անանկ որ կը նախընտրեմ պատուաւոր աղքատի մը հարս ընել զայն քան թէ հրէշ հարուստի մը ինչպիսին է Մինասը. զգուշացէք:»

Հոկտեմբերի մէջ ստացաւ տիկնի վերգինէ աս նամակը, հիւսկաբթի տուտ մը:

Շ. Կաւմարական
Շարունակելի

—Պուգրէշէն կը գրեն մեզ .
«Մահուան բոլոր, մեր ամենուս
սիրելի կիկիկիտի, ժայռ Զէյ-
թունի «ժայռի ձագ» Տ. Յարու-
թին Չաքրիան ժողովրդական
անմահ յեղափոխական, 35 օր
քաղաքիս «Գոյցէտ» հիւանդանո-
ցին մէջ թոքախտէ տառապելէ
յետոյ, իր փափաքանաց համա-
ձայն տաան օր մասնաւոր հոգա-
ծութեամբ առանձին տան մը մէջ
խնամուելէ վերջ, Յուլիս 26
ժամը 10ին դաժան ախտէն յաղ-
թուած մահը ընդգրկեց, սգոյ
մէջ թողով անշուշտ մեզ հետ
ամբողջ Հայութիւնն : »

«Տեղւոյս հայ գաղթականու-
թիւնն այս մասին եւս անտարբեր
չէ մնացած հակառակ իր անձուկ
վիճակին, Ուլբացելոյն հիւանդու-
թեան և յուզարկաւորութեան հա-
մար պէտք եղած ծախքերն հո-
գացած է, 114 ֆրանքի գումար
մը : »

—Պատ. Յակոբ Շահվէլտեան կ'իսնդրէ
մեզմէ հետեւեալը ծանուցանել .

«Այս երեկոյ ժամը 8:1/2ին Բո-
ղոքականաց եկեղեցւոյն մէջ պա-
տոր վանկէման Ռուսճուքի իր որ-
բանոցին վրայ տեղեկութիւն պի-
տի տայ . Ատենաբանութիւնը՝ որ
պիտի լինի գերմաներէն լեզուաւ,
պիտի թարգմանուի հայերէնի .
լսել փափաքողները սիրով կը հը-
րաւիրուին : »

ԿԱԹՈՒԿ ԷՐՄԵՆԻՆԻՆԻ
ՊԱՏՐԻԱՐԺԸ

Էվվէլտէն եազմըլ օլտըղըմըլ
իւզրէ, կաթողիկ միլլէթտաշարը-
մըղըն արդուսը խիւաֆընա օլա-
իագ Գալիսէրի առաջնորդը Էմ-
մանուէլեան Պողոս եպիսկոպոս
Պատրիարք ինթիսապ օլընմըլ
տըր . պու զաթ 70 եաշընտա բիր
իւթիլար օլտըղընտան մատաւ
թիւրքերվեր պիր շախս թանըլ-
մըլ տըր :

Միլլէթին վէ պախուսուո մէճ-
լիսի ճիսմանինն արգուսը Ատանա
առաջնորդը թէրզեան Սրբազանը
ինթիսապ իթմէր իտի . ֆագաթ
Եպիսկոպոսարըն մէճլիսի Էմմա-
նուէլեանը ինթիսապ իթտի :

Պու մատտէտէն տօլայը «Սէ-
մաֆօրըն Սթանպօլ մուխպիրի շու-
եօլտա եազմըլ տըր :

«Գեր. Թէրզեանըն Պատրիարք
ինթիսապ օլընմաղը շիւպհէսիդ
իտի, ֆագաթ Երլտըզ սէրայըն-
տան Պատրիարքարանա կէլէն պիր
իւթարտան անաշըլտըքի էկիր
Ատանա առաջնորդը ինթիսապ օ-
լուր իսէ Պատրիարքըն թաստի-
գինէ տայիր պէրաթ վէրիլմէյէ-
ճէք . Շայեսթա կէօրէ հիւքիւմէ-
թին պու իւթարընա սէպէպ Էր-
մէնիսթան գըրկընլարը Էսնասըն-
տա Գեր. Թէրզեանըն պազը հա-
րէքէթէրի իմիշ, Էսնի պու զաթ
օ Էսնատէ Էվրոքայա կիտուպ, է-
հալինին մէրհամէթինի էրմէնիլէրէ
ճէպ իտէրէք իանէ թէճէմիլ

իթմիշ տի, պու իանէ իսէ կաթու-
լիկ էրմէնիլէրին իգթիլապընա
թախսիո օլընտը, վագա պուսլար
գըրկընլարտան զարարտիտէ օլմա-
մըշլտր տը :

«Գեր. Թէրզեան Պելճիգատա,
Ֆրանսա տա վէ Աւստրիատա հէր
նէրէյէ միւրոճաթ իթմիշ տի ի-
սէ, անլէրին հըսսիլաթըն տահա
զիյատէ ուլանտըրմագ իչիւն գո-
թիլլէրին վահշիլիլէրինի նազլ
իթմիշ վէ թիւրքլէրին ըրդալէթի-
նի կէօսթէրմիշ տիր :

«Իշթէ թիւրք հիւքիւմէթինին
Գեր. Թէրզեանա գարշը ատալէ-
թի վէ զարէզիարլըրը պու սէ-
պէպտէն տիր : »

ՄԱՍՆԱՌՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մեր պատուարժան գործակալ-
ներէն և մեր հաշուոյն բաժնեգիրն
գանձիլ յանձնարարուած բարեկամ-
ներէն կը խնդրենք որ իրենց գան-
ձումներու հաշիւներ ընդփայլողը-
կենմեզ, որպէսզի չը վճարողներու
թիւրթեւը դադրեցնենք :

ՍՕՖԻԱ ԲԻԱՆԳՕՍԸ

Բուսմանիատա պիր շէհիրտէն
միլլէթտաշարըմըլտան պիր գաշ
զաթ Սօֆիանըն Բիանգօ պէտէլ-
լէրինտէն սաթըն ալմըլ օլմաղլէ
պիլէթ սաթանլարըն պազը աշվէ-
լինտէն շիւպհէլինէրէք պու խու-
սուստա պիլէ պիր գաշ սիւվալ
իթմիշլէր տի . Պուկարիա խարի-
ճինտէ պուլընտն միլլէթտաշարը-
մըղըն իւթալաթա գաբըլմամալա-
րը իչիւն շիմտիլիք շու գաւտար
պիտիլիլիլլէր քի :

1) Բարասընը վէրուպ սաթըն
ալմըլ օլտըղլարը պիլէթլէրի կէ-
րի վէրմէկէ մէճպուր տէկիլ տիր-
լէր, էն էյիսի օ պիլէթլէրի քէն-
տի էլլէրինտէ սազլամալը տըրլար,
զիրա Պուկարիա խարիճինտէ պա-
զը իգպալաբէսթլէր օ պիլէթլէրի
կէրի ալուպ, տիկէր պիրսինէ
տախի սաթմագտա իմիշլէր :

2) Բիանգօ հէր ալ չէքիլմէք-
տէ օլտըղընտան, պիլէթ սաթան
գօլէթթէօլլէր քէնտի միւշթէրի-
լէրինէ հէր ալ չէքիլէն նօմէրօլա-
րըն թապ օլընմըլ ճէտվէլինի կէօս-
թէրմէյէ մէճպուր տըրլար :

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻՅԵ

Սիս կաթողիկոսըն ինթիսա-
պընա տայիր սուտուր իտէն իրա-
տէտէն մատաւա, մահպուտ պու-
լընտն Էրմէնիլէրէ իսնատ օլընմըլ
օլան թէօհմէթլէրի թէտըզը ու
թահգիդ իթմէք վէ միւհրիմի-
լէթլէրի թէպէյիւն օլընմայան էշ-
խասը թախիլէ էլլէմէք մէմուրի-
լէթիլ իլէ մուլթէլիթ պիր գօմի-
սիօն թէշքիլի իչիւն թալիմաթ
վէրիլմիշ տիր :

—Բարիստէքի թիւրք էլչիսի
Սթանպօլա կէլմիշ տիր . զաննիա-
թա կէօրէ, մէրգուս Բարիստէքի
կէնճ թիւրքլէրին աշվալ ու հա-
րէքէթի հագգընտա պիր ըարօրթ

գալէմէ ալուպ Երլտըզա թագտիմ
իտէճէք տիր ,

—Ֆրանսա խարիճիլէ նազըրը
Մ. Տէլքասէ Բէթրապուրկուսն
Բարիստէ ալտէթ իթմիշ տիր .
Վիւքէլա ըյիսի Մ. Վ. Բուսօ
մէրգուսը գարշըլմըլ վէ տիկէր
սապաշ Մ. Տէլքասէ ճուհուրի-
լէթ ըյիսի Մ. Լուպէնին նէզ-
տինտէ թաամա տալէթ օլընմըլ
ալը :

—Տանիմարքանըն Սէնթրուա-
տասընտա պիր պօրու չըգուպ,
բէք չօգ խասարաթ վէրմիշ վէ 30
քիշի թէլէթ իթմիշ տիր :

—«Թայմըզ»ըն Պոմպէտէն յի-
տըղը մալիւմաթա պինաէն, 12000
Հինտիալիսաբէր ձէնուպի Աֆրիգա-
յա նազլ իթմէք իչիւն հազըրըզ-
լար կէօրիլմիշ տիր :

—Էվվէլտէն եազմըլ օլտըղըմըլ
իւզրէ, Սթանաօլտաքի Բուս էլ-
չիսի Պապը Ալիլէ պիր նօթա վէ-
րուպ, սինօր իւզէրինտէ վուգու
պուլան էշգըլալըզ վէ հայվանաթ
խըրազըզլարընտան տօլայը իշ-
թիքեա իթմիշ վէ պու ուլկուսն-
սըղըզլարըն էքսէրիսի Համիտիլէ
Քիւրտ սիւվարիլէրին մուսվէնէթ
ու վասըլթասը իլէ իճրա օլընտը-
ղըն իտտաա էլլէմիշ վէ նիհալէթ
պու ուլկուսնսըղըզլարա տէր հալ
նիհալէթ վէրիլմէսինի թալէպ իթ-
միշ պուլընտըղը թաստիդ օլընմըլ
տըր :

—Հաճի- էլլէզ—Պօրիսօֆիկատ-
տան «Գուրիէ տէ Պալգան»ա օ-
գոստոս 9 թարիլլէ պէր վէճհի
թիլ պիլտիլմիշլէր տիր :

«Պու կիճէ սաաթ 11տէ
սինօրտաքի թիւրք նօթաթըն-
տան (Բատօք տաղը) սաքէրլէր
Ագպուտազըզտաքի պիլիմ սա-
քէրլէրին իւզէրինէ հուճուս իթ-
տիլէր . Պու հուճուստան տօլայը
հէր իքի թարաֆտան պիր սաաթ
գատար աթէշ իտիլտի . թիւրք-
լէր կէրի չէքիլմէյէ մէճպուր օլտը
լար . պիլտէն հիշ պիր քիմսէ
եորէլէնմէտի : »

—Կէլէնլէրտէ եազմըլ օլտըղը-
մըլ իւզրէ, Չարըն եէնի պիր
գօնկրէ թէճէմիլսի իլէ Շարգ
մէսէլէլէրինի եանի պաշընա Էր-
մէնիսթան վէ Մաքիթինտէ պու-
լընտըղը Սուլթանը բէք րահաթ-
սըզ իթմիշ օլմաղլէ, Չարըն օլ-
մագսէտինի իճրա իթտիլմէյէթիւս-
սուսընտա Պերլին վէ վիլէննա տա-
իրէլէրինտէ Սուլթանըն էշհէր ճի-
հէթ չալըշաճաղըն պազը կազէ-
թալար եազմըլ տըր :

—Ֆրանսա խարիճիլէ նազըրը
Մ. Տէլքասէնին Պու տէֆա Բէ-
թէրապուրկա կիթմէսինէ բօլիթի-
գաճա պէօյիւք էհէմիլլէթ վէրիլ-
մէքտէ օլտըղը կիպի, «Տէյլի
Նիւս»ըն Բարիս մուխպիրի տա-
խի Մ. Տէլքասէնին պու եօլը-
լըղընա՝ Բուսիա հիւքիւմէթիլ իլէ
պազը էհէմիլլէթիլ մէսէլէլէր հալլ
իտէճէկինի, վէ պուսլարտա Ասիա
մէսէլէլէրի տախիլ օլտըղըն, եա-

նի Էրմէնիսթան մէսէլէսինին տա-
խի մէվճուտ պուլընտըղըն զանն
իթմէքտէ տիր . Գէզա պաղըլա-
րըն էֆէիարիսա պինաէն, թիւրք-
քիս խարիճիլալար իւզէրինտէ
Ֆրանսանըն էօթէտէն պէրու հա-
մի պուլընմագ հագգընը գուվ-
վէթլէշտիլմէք մագսէտի իլէ Տէլ-
քասէ Բուսիա իլէ իթթիֆագ հա-
սըլ իթմէկէ չալըշաճագ ըմըլ :

—Ամերիգալը Ամերալ Տէվլի
պիր միւլազաթտա տէմիշ տիր :

«Պիլ ինկիլթէրա իլէ թապիի
միւլթթէֆիգլէրիլ, խուսուսի մէ-
սէլէլէր պիլիմ իթթիֆագըմըլը
իլլալ իտէմէլլէր : Իլք մուհարէ-
պէմիլ Ալըմանիա իլէ օլաճագ
տրր : »

ՎԱՆԱՄԱՆՕՔ ՄԵՔԵՆԱՊՈՐՏ
ՎԱՌԱՅ
Ա. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Տրախօւսան փողոց թիւ 1210

ժամանակէ մը ի վեր երկրա-
գործական մեքենաներով զբաղած
ըլլալուս պատճառաւ իմ մասնաւոր
գործարանս գոց կը մնար .
Այժմ կուզամ ծանուցանել թէ
ամեն տեսակ կարի մեքենաներու
համար մասնագէտ վարպետ մը
բերիլ տուած եմ .
Գործարանիս մէջ կը նորոգուին
նաեւ շոգեշարժ եւ ջրաշարժ մե-
քենաներ, հեծանիւներ (պիսիքլէթ)
գուլպայի եւ երկրագործական մե-
քենաներ, ջրհաններ ևն . զորս
նորոգելէ վերջ եթէ մէկ տարուան
միջոցին աւրուին՝ պատրաստ եմ
վերանորոգելու : Նոր ջրաղացներ և
շոգիէ աղօրիքներ նոր ինտոյ կը
հաստատենք ընտիր կերպով :

ՄԵՏ ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆ

	
ՍՕՖԻԱ ՔԱՂԱՔԻ	
ՊՈՒԼԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԵՆ ԵՐԱՇԽԱՌՈՐԵԱՆ Ա. ՊԱՐԳԵՆԻՆ Է 500,000 ՖՐ. ՈՍԿԻ 50,000 տոմսեր հրապարակ հանուած են, որոնց 25,000ը պիտի չահին հե- տեւալ կերպով ներկայ տարույ՝ Յուլիս 9ին 1,500 թիւեր 92,680 ֆր. Յուլիս 7 1,500 » 135,180 » Օգոստ. 4-5 2,000 » 241,780 » Սեպտ. 3-4 » » 309,080 » » 23-24 » » 363,250 » Հոկտ. 13-31նոյ. 16000 » 3389,040 »	

ԳԻՆԵՆ ԵՆ ՈՍԿԻՑԻՆՈՒՄ	
Գաւառը	Մէկ ուլլիկը
Կէս	1.25 ֆ.
»	2.50 ֆ.
»	4 »
»	5 »
»	10 »
»	14 »
»	12 »
»	8.60 »
»	10 ֆ.
»	16 »
»	20 »
»	28 »
»	24 »
»	17.20 »
»	115.20 »
»	57.60 »
»	28.80 »
»	14.80 »
Գինիլու եւ մանրամասն տեղեկութեան համար պէտք է գրմել Սեպտեմբեր Տար ՍԱԳԻՍ ԳԱԼԵ- ՐԻԷԼԵՆԻՆԻ ԳԻՆԻՆԻՐ ԳՈՐԾԱԿԱՆ Ե.Վ. վիճա- կապալա, Վառնա	
Մ. — Բ. Շրջակայ քաղաքներէն եւ կամ յանձնարարութիւնք հաւթով կը կատարուին :	